

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարությունը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարությունների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԱՌԱՋԻԿԱՅ 1891 ԹԻՒԱԿԱՆԻՆ

ՄՇԱԿ

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք սեփական շնորհակալություններ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՍԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում, Թատերական տանիքում):

Կայտարարությունները թողնելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարություններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով: Բառերը վճարվում է 2 կոպեկ:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտարարում է ընդհանուր գիտություններ, որ ներկայ 1890 թվի նոյեմբերի 4-ին, կիրակի օր, Դուռնայի դահլիճում, առաւօտեան 9 ժամին՝ կայանալու են առաջին կարգի ձայնավարների ընտրությունները, առաջինից 1891—1894 թվաամսակի համար: 3—3

ԲՈՎԱՆՎԱԿՈՒԹԻՒՆ

Ազատամիտ կուսակցությունը Անգլիայում.— Ներքին, ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լազարեան ձեռնարանի տունը. Գլխի ստոյնները և ծծումբ ծխելը. Էփանազիոս հրատարակություններ. Նամակ Հին-Նախնականից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պոլսի հայոց համալսարանի Ժողովը նիստեր. Արտաքին լուրեր.— ԽՈՒՆ, ԼՈՒՆԵՐ.— Հեռագրեր.— ՏԵՂԵԿԱՅՈՒՆ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԱՋԱՏԱՐԻՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Այժմեան համայնական և մասնաւոր լրացուցիչ պարլամենտական ընտրությունները Անգլիայում գուշակել են տալիս որ պատամիտ կուսակցությունը Անգլիայում քանի կերթայ՝ աւելի և աւելի յաղթող կը հանդիսանայ, իր համար հաստատ հող պատարաստելով ապագայ պարլամենտում և կատարելապէս վայր գցելով երկրի պահպանողական կուսակցությունը:

Սակայն, կասեն մեզ, ի՞նչ կը լինի թէ Անգլիայի և թէ Եւրոպայի դրութիւնը, եթէ ազատամիտ, կամ ինչպէս նրան անուանում են՝ դադարածուկ կուսակցությունը յաղթող հանդիսանալով, երկրի կառավարութեան ղեկը իր ձեռքը կը գցի:

Այդ տեսակ դրութեան հեռանկարը դժուար է գուշակել երկրի ներսում լայն աշխարհ կը գտնուի և կը սկսեն զործադրվել ներքին թեֆօրմներ իւր լայն, ընդարձակ պոլիտիկայով, որոնք վաղուց արդէն սպասուում են իրանց զործադրութեան և որոնց առաջ մղողը եղել է այն ազատամիտ ձեւերը, Գլխաւորապէս, որը քանի գնում է աւելի և աւելի Ժողովրդականութիւն է ստանաւ թէ բուն անգլիացիների, թէ իրաւագիտների և թէ շտապագիտների մէջ: Ընտրողական լայն սխառմը, Իրաւագիտի և շտապագիտի ինքնավարութիւնները, հերթական հարցեր կը դառնան և անշուշտ գրեթէ կը գտնուի, առաջ մղվելով Գլխաւորապէս և նրա կուսակցիների եռանդոտ ձեռքերով:

Բայց և Անգլիայից դուրս, միացած Եւրոպայի վրա, Եւրոպական միւս պետությունները վրա, այդ պետությունների իրար մէջ եղած յարաբերութիւնների վրա մեծ ազդեցություն կունենայ Անգլիան, երբ ղեկավարված կը լինի ոչ թէ պահպանողական, այլ ազատամիտ կուսակցութեան ձեռքով: Նախ և առաջ Անգլիան կը հրաժարվի Գերմանիայի հետ իր ունեցած բարեկամութիւնից և Գերմանիան, որը այս րոպէին Անգլիայի թշնամին է, բարեկամական ձեռք կը

մեկնի զադատման, կամ աւելի լաւ է ասել ազատամիտ և Գերմանիայի թշնամի Անգլիային, և այդ երկու պետությունները, նորից ձեռք ձեռքի տալով՝ միասին կը սկսեն զործել երկրպագութեամբ, այդ երկրի իրանց միացած հովանաւորութեան տակ վերցնելով: Տեսնելով Անգլիայի և Գերմանիայի դաշինք, Սպանիան, Պորտուգալիան և Իտալիան անպատճառ կը միանան անգլո-ֆրանսիական յոժի հետ, ապա Աւստրո-Ունգարիան, որը մինչև այսօր ակամայ ընդունում է եղել Գերմանիայի դերը իրանց թշնամիութեան, տեսնելով Գերմանիայի յոժի դէմ հանդիսացող մի նոր հակակշիռ, անմիջապէս կը շտապի հեռանալ Գերմանիայի հետ իր ունեցած դաշնակցութիւնից և միանալ Անգլիայի յոժի իրանց կողմն ունեցող բոմանական ազգերի դաշնակցութեան հետ:

Այդպիսով Անգլիայի ազատամիտ կուսակցութեան յաղթանակը այն անմիջական հեռանկար կունենայ, որ Գերմանիան առանձինս առաջ զորութեան մէջ կը մնայ, իսկ Գերմանիայի այդ տեսակ վիճակը այն հետեւանք կունենայ, որ կը նուազվի յետագիւմը: Երկրի այդ Եւրոպայում ու նորից կը վիճի աւելի ազատ, աւելի մարդասէր, աւելի մարդավայել ոգի բոլոր Եւրոպական պետությունների մէջ:

Եւ որովհետեւ մինչև տասն և իններորդ դարի լրանալը միայն տասն տարի է մնում, ուրեմն կարելի կը լինի իրաւամբ ասել, որ Անգլիայի ազատամիտ կուսակցութեան յաղթանակը կունենայ պատճառով առաջ եկած բարեկարգ քաղաքական կերպարանափոխութեան շնորհով. քաղաքակրթւթ մարդկութիւնը, որը ներկայ դարի վերջերում նորից սկսեց յետադիմել և համարեա միջնադարեան խաւարի վիճակի մէջ ընկնելը—կը հանդիպի քաղաքակրթ դարը, ներշնչված լինելով ժամանակի պահանջներին աւելի համապատասխան, մարդկային քաղաքակրթութեան պահանջներին աւելի վայել, մի խօսքով աւելի ազատամիտ և մարդավայել քաղաքակրթութիւն:

Իսկ երբ որ Եւրոպան աւելի առաջադէմ է, նրա մէջ տիրող ոգին անտարակոյտ ազդեցութիւն ունի և երկրաբանութիւն միւս մասերի վրա: Այդպիսով արդէն նշանաւոր և հաստատ նշաններ կան, որ բիսմարկեան Գերմանիայի ձեռքը և յետագիւմ գերիշխանութեան փոխարէն շատ շուտով կը սկսի տիրապետել զադատման Անգլիայի ազատամիտ և առաջադէմ գերիշխանութիւնը, որը թէ Եւրոպայի և թէ ամբողջ աշխարհի համար կը կազմի մի նոր և լուսաւոր դարադարձ, փշրելով ամեն տեղ տիրող խաւարն ու յետադիմութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼԱԶԱՐԵԱՆ ՁԵՄԱՐԱՆԻ ՏՈՒՆԸ

Ներկայ 1890 թվի մայիսի 10-ին լրացաւ Լազարեան ձեռնարանի 75-րդ ամսակը և այսօր, հոկտեմբերի 24-ին՝ ձեռնարանը տոնում է շատ համեստ կերպով իր այդ երկարատև գոյութեան տարեդարձը: Այսօր ուսում չը կայ ձեռնարանում և 11 ժամին բոլոր հայ աշակերտները գնացին և կեղեցի, ուր Ե. պատարագին երգում էր աշակերտների երգեցիկ խումբը, եօթներորդ դասարանի աշակերտ Գ. Ստոլետովն ղեկավարութեամբ: Ս. պատարագին ներկայ էին, բացի Լազարեան ձեռնարանի հայ պաշտօնեաներից, բազմաթիւ հայ ուսանողներ Մօսկվայի համալսարանից, Լազարեան ձեռնարանի նախկին աշակերտներ, մի քանի բարձրատիւն անձինք ձեռնարանի հին սաներից, տեղիւ հայ հասարակութիւնը և ակադեմիկոսները: Բացի այդ, որտեղ էր նաև մեր մանուկ դրականութեան ներկայացուցիչ Գ. Արշակունց և Նոր-Նախիջևանի հայոց Երևանի ներկայացուցիչները՝ Գ. Չալոյան և Գ. Չալոյան:

Ս. պատարագից յետոյ վերադառնալով ձեռնարան, բոլոր աշակերտները կարգով շարվեցան աւագ մատնադրանում. իսկ մանկավարժական խորհրդի դահլիճը նշանակված էր պատուաւոր հիւրերի ընդունելութեան համար. այդ դահլիճում դադնայ պատկերով դարձրված էին Լազարեան պերճ տոնի նշանակւած Գաղար աղայի, նրա երկու որդի Գրիգորի և Գրիգորի խղճարկաբար պատկերները, ձեռնարանի վերջին հոգաբարձու՝ հանգուցեալ խաչատուր աղայի կիսարձանը, որը կանգնեցրել էր նրա համար Մօսկվայի երախտագետ հայ հասարակութիւնը այն պատճառով, որ խաչատուր աղան 1865 թվին նուրիւք էր իր ազգասէր նախնեաց ձեռնարանին 200,000 ռուբլի մեծ գումարը այն իսկ միջոցին, երբ ձեռնարանը կատարում էր իր 50-ամեայ յօդեւանը: Դահլիճը կամաց-կամաց լցվում էր հանդիսականների խումբը բաղկացնող, կէսօրվայ մօտ ժամը 1-ին ներս մտաւ Մօսկվայի գեներալ-նահանգապետ իշխան Գրիգորովի, ուղեկցութեամբ Մօսկվայի չքմանի հոգաբարձու կոմս Կապիտանի և նրա օգնական Գ. Սադոկովի: Ժիշ 1 ժամին ամբիոնի վրա երեսց Լազարեան ձեռնարանի ներկայ վերապետ Գ. Գեորգի Գալանեանց, որն իր ընդարձակ գեղեցիկ ճառում ազգու կերպով նկարագրեց ձեռնարանի պատմութեան ամենանշանաւոր հանգամանքները և չքմանները, երբ Լազարեան ձեռնարանը իր արեւելեան լեզուներով և ծրար գրով բացառական զիջք դրակով կայսրութեան ուսումնարանների մէջ, իր հիմնադրի ու նրա որդի անխնայ վատակները շնորհով արժանացաւ վայելչու արդարեւ պետական բարձրատիւն անձանց հովանաւորութիւնը, որպիսիք էին կոմս Արախչեւի, իշխան Օրբով, Բենիկեւորդի, Բուսկով, նախկին Ժողովրդական լուսաւորութեան մինիստր կոմս Գլխաւորի Տօլստոյ: Մասնաւոր այս վերջինի գործունէութիւնը Գ. Գալանեանց շնորհիւ 1870 թվին հաղւ մի տարի էր անցել ձեռնարանի մասնագիտական դասարանների փակվելուց, երբ Լազարեանցի լուսաւորութեան մինիստր կոմս Գ. Տօլստոյ մեծ ուրախութեամբ յանձն առաւ ձեռնարանի գլխաւոր կառավարչի պաշտօնը: Արդարեւ 1871 թվին անձամբ գալով Մօսկվա և երկու օր յաճախելով ձեռնարանը, կոմս Տօլստոյ մօտից ծանօթացաւ նրա հանգամանքներին, խոր-

հուրդ կազմեց ձեռնարանի պաշտօնեաներից իր նախագահութեամբ և ուշի ուշով լսելով իւրաքանչիւրի կարծիքը, ձեռնարանի համար մշակեց առանձին կանոնադրութիւն, որ և հաստատվեց Բարձրագոյն իշխանութիւնից 1872 թվին: Ահա այդ իսկ կանոնադրութեան զօրութեամբ նորից բացվեցան մասնագիտական երեք կուրսերը և կառավարվում է ձեռնարանը (գիմնազիական դասարանները): Կոմսից յետոյ, կամենալով մի անգամ ընդ միշտ ապահովել ձեռնարանի ապագան և գոյութիւնը դանաղան պատահարներից և արու դասակ չունենալու պատճառով, վերջին հոգաբարձու խաչատուր աղան Լազարեան ձեռնարանը յանձնեց ազգային լուսաւորութեան մինիստրութեան հսկողութեանը: Այնուհետեւ հոգաբարձութիւնը դադարեց և պատուաւոր հոգաբարձուի տիտղոսն անցաւ Լազարեանց կրտսեր ձեռնարանին, այն է իշխան Արամէյի-Լազարեանցի տոնին, որի այժմեան ներկայացուցիչն է երիտասարդ Սիմէոն Արամէյի-Լազարեանցը:

Արդ՝ համաձայն խաչատուր աղայի կտակին, ձեռնարանի մայր գումարը, որ հասնում է մինչև 900,000 ռուբլի, Լազարեանց թոշակաւորների իրաւունքը, հայոց լեզուի ու կրօնի դասաւարտութիւնը Բարձրագոյն իշխանութիւնից հաստատված կանոնադրութեան զօրութեամբ, անձեռնմխելի է: Բացի դրանից, որովհետեւ ձեռնարանը հիմնված է յատկապէս չքաւոր հայոց դասակների համար և աշակերտների 2/3-ը միշտ հայեր են, ուստի ըստ օրենի, կառավարիչներից մինը կամ վերապետը չը կը կամ տեսուչը անպատճառ հայ պիտի լինի, որպէս և է իրօք:

Պ. Գ. Գալանեանցից յետոյ Գ. Խաչկիւնց կարգաց մասնագիտական կուրսերի հաշիւը, Կուրսից Կուրսի մասնակարժական խորհրդի քարտուղարը կարգաց վերջին քննութիւնների հաշիւը և նոյն միջոցին սկսվեց պարզաբարձութիւնը: Վերջապէս ամբիոնի վրա բարձրացաւ Նոր-Նախիջևանի հայոց պատգամաւորներից մինը, Գ. Չալոյան. իր գեղեցիկ ատենաբանութեան մէջ նա մեղ աւետեց, թէ Նոր-Նախիջևանի դուռնաւոր, քաղաքագլուխ Գ. Բալաբանեանի նախագահութեամբ, արտաքոյ կարգի նիստ է կայացել, որ վճռված է եղել առանձին պատգամաւորութիւն ուղարկել Մօսկվա քաղաքի կողմից շնորհաւորելու Լազարեան ձեռնարանի 75-ամակը, այս խօսքերից յետոյ երիտասարդ պարոնը, իբրև ձեռնարանի նախկին աշակերտ, ջերմ և անկեղծ բառերով թէ իր քաղաքացիների և թէ յատուկ իր կողմից արտաքայտեց երախտագիտութեան խորին զգացմունքներ ձեռնարանին, որին պարտական է մասնաւորապէս Նոր-Նախիջևանը և ընդհանրապէս հայ և ռուս հասարակութիւնը: Պ. Չալոյանի ճառը բուռն ծափահարութեամբ ընդունվեց և այնպիսի քաղցր տպաւորութիւն թողեց ներկայ գտնվող հասարակութեան վրա, որ մինչև անգամ ձերբունի գեներալ-նահանգապետ իշխան Գրիգորովի և կոմս Կապիտանի երկու տեղերից, ձեռք մկնեցին երիտասարդ պատգամաւորին և յայտնեցին նրան իրանց գոհունակութիւնը: Պ. Չալոյանի մի ուղիւ կարգաց Նոր-Նախիջևանի սեմինարիայի կողմից, ապա լատիններէն լեզուով իր alma mater ձեռնարանի 75-ամակը շնորհաւորեց: Մօսկվայի հնագիտական ընկերութեան ուղիւ կարգաց նոյն ընկերութեան քարտուղար, Լազարեան ձեռնարանի նախկին աշակերտ, Գ. Տօլստոյի, ուսանողների կողմից կարգացին Միլան Բերբերեանց և Վիսկովսկի: Բաղմաթի հեռագիրներից կը յիշեմ միայն մի քանիսը. մեր պէտք ձերունի Վ. Էմիլից, պրոֆ. Սեւերեանցի, Էմիլիանի ձեռնարանի ուսուցիչներից՝ Ս. Մանդրեանցից, Զարգարեանցից, Թ. Յովհաննիսեանցից, Պետանեանցից և այլն: Հանդէսը վերջացաւ «Боже Царя храни» երգով, որ երգեցին աշակերտները. արդէն չորրորդ ժամն էր, երբ հասարակութիւնը, քաղցր տպաւորութեան տակ, սկսեց ցրվել:

Վերջացնելով նամակս, պարտք եմ համարում աւելացնել, որ վերջին վեց տարվայ անտեսութեան շնորհով ձեռնարկուած 32,000 ռուբլի պահեստի գումար է գոյացել, որ միջոց է տալիս ձեռնարկի վարչութեան մի առանձին և ընդարձակ դահլիճ կառուցանելու աշակերտներին համար: Բացի դրանից, բաւական խոշոր նուիրատուութիւններ ևս եկել են մասնաւոր անձանց կողմից թոշակաւորներին թիւն աւելացնելու համար, մօտաւորապէս 50,000 ռուբլի: Իսկ հանդուցեալ Յ. Յովնանեանցի մահից յետոյ Էդիլթա-նեանցի գումարն էլ մտել է մեր ձեռնարանը:

Խ. Յ.

ԳԻՆԻ ՍԱՌՅԵՆԸ ԵՒ ԾՅՈՒՄԲ ԾԻՆԸ

Աւելորդ չենք համարում մասնաւորացի անել մի միջոցի վրա եւս, որով առանց մեծամեծ ծախսեր անելու կարելի է գինու ալիօսային աստիճանը բարձրացնել: Այդ միջոցը գինին սառնցնելն է:

Գինին, ինչպէս գիտենք, ալիօսի և ջրի խառնուրդ է: Յայտնի է նոյնպէս, որ ալիօսը չափից դուրս ցուրտ եղանակի պիտի ենթարկել, որպէս զի նա սառչի, և մի պարզ դատարար կազմելու համար կանենք միայն, որ այն բոլոր երկրներում, որտեղ խաղողի վաղ են մշակում, ոչ մի ցրտի ժամանակ ալիօսը չէ սառչում. ուրեմն գինին ալիօսի և ջրի խառնուրդ լինելով աւելի ուշ կը սառչի, քան թէ ջուրը և սառած ժամանակ ոչ թէ գինին է իսկապէս սառչում, այլ գինու ջրալին մասը միայն:

Վերջենք մի երեսը բաց աման (փղբրիկ կիսատակաւ) մէջը գինի լցնենք և ձեռք ժամանակ երբ գինը կամ ցերեկը կուռնանք—50 կամ—70 ց. զննք դուրսը մի ծածկի տակ: Այդտեղ թողնենք մի 7—15 ժամ. կը տեսնենք, որ գինու մի մասը սառել է: Եթէ այդ սառուցը հաւաքենք և մի տաք սենեակ տանենք, հալելուց յետոյ կը ստանանք սովորական մաքուր գտած ջուր:

Եթէ գինին սառնցնելուց յետոյ սառուցը հաւաքենք զէն ձգենք, պարզ է որ գինու ջրային մասը քչացրած կը լինենք, հետեւապէս ալիօսային աստիճանը կաւելանայ:

Ուրեմն այդ հասարակ միջոցով մեր ալիօսով աղքատ գինին թնդացնենք: Միայն պիտի ի նկատի ունենանք մի հանգամանք, այդ այն է, որ սառուցը զէն ածելով գինու քանակութիւնը պահպանում է հարիւրից 10—15%. այսինքն, եթէ սառնցնելուց առաջ 100 շիշ գինի ունենային, սառուցը զէն ձգելուց յետոյ կուռնանք միայն 85 կամ 90 շիշ: Բայց գինու թնդանալովը գինու արժէքը բարձրանում է և այդ կորուստը լրացէս վարձատրուում է:

Երբ գինին ուղում են սառցնել, լցնում են մանր տակաւների կամ կիսատակաւների մէջ և գինեանից հանում, տանում շարում են դուրսը մի ծածկի տակ—50-ից մինչև—70 C. ցուրտը 12—14 ժամ պարելով գինու վրա, սառցնում է նրա մի մասը: Սառուցը հաւաքում են և գինին տեղափոխում գինեմուշ: Պէտք է խիստ կեղտով զոռչանալ չափից դուրս ցրտի ենթարկելուց: Ամենալարմար ցուրտը—50 է և կամ մինչև—70 ոչ աւելի: Եթէ գինին դուրս է հանած, բայց—70-ից աւելի ցուրտ եղանակ է սպասում, կամ տակաւները պէտք է զանազան փաթկներով, կապերտներով ծածկել և կամ, նորից ներս տանել:

Գինու սառնցնելու սովորութիւնը ձեռնուող է գլխաւորապէս այն երկրներին համար, որտեղ ձմեռը ունենում են սովորաբար 5—70 ցրտութիւն և կամ աւելի:

Սառնցնելու սովորութիւնը ոչ միայն բարձրացնում է գինու ալիօսային աստիճանը, այլ և եթէ նա պղտոր է, պարզապէսում է. այդ վերջին դիպածում իսկոյն և եթէ գինին պիտի տեղափոխուի և բաժանել իր տակաւների ու լցնել մի նոր տակաւի մէջ, հակառակ դիպածում տակն իջած աղտոտութիւնները նորից կը բարձրանան և կը պղտորացնեն գինին:

Մի քանի խօսք էլ ծծումբ (քսոքսուրթ) ծխելու մասին: Ծծումբը գործադրութիւնը քանի գնում աւելի է տարածվում և աւելի է ընդարձակվում: Բժշկականութեան մէջ նա նշանաւոր տեղ է բռնում, չերամպապահութեան մէջ նա անհրաժեշտ է, վաղերի դանաղան հիւանդութիւնների առաջին առնողը դարձեալ ծծումբն է, գինեգործութեան մէջ նոյնպէս նա մեծ դեր է խաղում: Ընդհանրապէս ծծումբը դործ է ածվում պարագիտներ ոչնչացնելու և կամ նրանց վնասակար ազդեցութեան առաջին առնելու համար:

Սովորութիւն է դարձած, որ տակաւը դա-

տարկելուց յետոյ և լցնելուց առաջ ծծումբ են ծխում:

Տակաւները դատարկելուց յետոյ, պէտք է լաւ մաքուր լուանալ, սպասել լաւ չորանայ և ապա ծծումբ ծխել:

Երբ տակաւի մէջ գինի են ուղում լցնել, պէտք է նախ լաւ մաքուր ջրով ողողեն և ապա ծծումբ ծխեն:

Բայց ինչպէս և ինչ քանակութեամբ կարելի է ծծումբ ծխել: Յարմարութեան համար պատրաստում են ծծումբի պատրոյգներ, հետեւեալ ձևով:

Մի ամանի մէջ հալցում են ծծումբը և ապա դրա մէջ են ընկղմում հասարակ քաթմանից և կամ մի այլ շորից պատրաստած նեղ (1/3 վերջով լայնութեամբ) և 2—2 1/2 վերջով երկարութեամբ կտորներ, որոնց երկու երեսն էլ ծածկվում է մի բարակ շերտ ծծումբով:

Պատրոյգները ծխելու համար դործ են ածում մի շատ հասարակ դործիք: Դա մի 5 վերջովանոց բարակ երկաթեայ ձող է, որի մի ծայրին կպցրած է երկաթեայ բարակ թիթեանից շինած մի փղբրիկ բաժակ, իսկ միւս ծայրը վերջանում է փայտեայ կլոր կոթով: Բաժակից մի 3 վերջով բարձր, ուղիղ նրա վերեւում գտնվում է մի կարթ: Ծծումբի պատրոյգը մի ծայրով կախ են անում այդ կտորից, ցածր ծայրը վառում են և ամբողջ դործիքը տակաւի բերնով ներս են տանում տակաւի մէջ և իջնցնում են, մինչև որ դործիքի կոթը փակում է տակաւի բերնը:

Մի քանի բազէից յետոյ դործիքը հանում են և տակաւի բերնը իսկոյն և եթ պինդ փակում են: Շատ անգամ այդ դործիքը բաժակ չէ ունենում. բայց դա շատ անյարմար է և վնասակար, որովհետեւ ծծումբը վառվելիս երբեմն կաթնում է և եթէ բաժակ չը կայ, կաթնուածքը ընկնում է տակաւի մէջ. բայց շատ անգամ էլ այլոված շորն է վայր ընկնում, որը նոյնպէս, ինչպէս և առաջինը շատ վնասակար է: Իսկ բաժակ եղած ժամանակ թէ կաթնուածքը և թէ վայր ընկնող այլոված շորը նրա մէջ կընկնեն:

Ծծումբի գործադրութիւնը շատ օգտակար է, բայց երբ չափից անցնում է, նա վնասակար է:

50 վերջանոց տակաւի համար պիտի ծխել մի պատրոյգ: Եթէ տակաւը դատարկելուց յետոյ պայտէս էլ պիտի մնա, լուանալուց յետոյ անպատճառ պիտի սպասել, որ լաւ չորանայ և ապա ծխել, եթէ ոչ ծծումբից առաջացած գաղը կը միանայ ջրի գոլորշիներին հետ և մի առ ժամանակ տակաւի մէջ մնալով միանգամ առ միշտ տակաւը կը փչացնի, հաղորդելով մի անտանելի հոտ: Իսկ երբ տակաւը պէտք է գինի լցնեն, կարելի է ողողելուց յետոյ անմիջապէս ծխել, թէ և ծծումբը թաց տակաւում օդի խոնավութեան պատճառով լաւ չէ ծխում:

Կարմիր գինիների վերաբերութեամբ պէտք է մի քանի զգուշութիւններ ի նկատի ունենանք, որովհետեւ ծծումբի ծխելուց առաջացած գաղը, եթէ նա մեծ քանակութեամբ է, ազդում է գոյնի վրա և կարմիր գինու գոյնը սփռնեցնում է: Շատ թուրք կարմիր գինիները կարելի է աղտոտ կերպով ծխել, իսկ բայց գոյն ունեցողները շատ սակաւ: Ծծումբը ծխելուց առաջ պիտի զգուշանալ որպէս զի տակաւի մէջ ալիօսը չը լինի, հակառակ դիպածում կարող է պայթելու առաջ դալ:

Երևան.

Մ. Մուսինեանց

ԷԺԱՆԱԳԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսաց նշանաւոր գործիքները գրուածքները անհաղթար լոյս են տեսնում էթանացրած գինով, և այդ հրատարակութիւնները հաղորդելով, տաւնեակ հաղորդելով տարածվում են ժողովրդի մէջ: Ո՛վ չէ գնում, օրինակ, Պուշկինի գրուածքները, որոնք արժեն ընդամենը 1 ռուբլի 50 կօպէկ:

Դաւանքը դէպի մեզ: Ունենք արդեօք մենք էլ այդպիսի էթանագին հրատարակութիւններ մեր յայտնի գործիքի գրուածքները:—Ո՛յ, չունենք: Վերջենք, օրինակ, հանդուցեալ Բաֆֆիի գրուածքները: «Մշակը» անցեալ տարիներում առաջարկեց հրատարակել Բաֆֆիի գրուածքները էթանացրած գինով, բայց մինչև այսօր այդ օգտակար առաջարկութիւնը չի րադարձվել: Ընդհանրապէս Բաֆֆիի գրուածքները այժմ լոյս են տեսնում կարծես միայն, թող ներվի մեզ ասել, գինը ցանկացողներին հարստահարելու համար: Ի՛նչ է նշանակում «Գաւիթ-բէլի» 4 հատորը միասին հրատարակել և միասին ծախել: Դիցուք թէ մէկը ունի այդ գրքի առաջին 3 հատորը, ինչու նա

չբորորդ հատորի համար, որը պարտական է ընդամենը առաւ երես, գին առաջին 3 հատորն է: Ի՛նչ է նշանակում «Ջալալեդդին» և «Խեթի» հրատարակել մի գրքի մէջ: Եթէ մէկը ունենայ երկուսից մէկը, միւսը ունենալու համար նա ստիպված պէտք է համ իր ունեցածիցը գնէ, համ էլ միւսը... Բացի դրանից, հրատարակելով 4 հատորը միասին, կամ երկու գրքը միասին, պէտք է գինն էլ շատ նշանակել: Իսկ ոչ էթանագրքերը չեն տարածվում ժողովրդի մէջ, մանաւանդ մեր մէջ: Եթէ, օրինակ, «Գաւիթ-բէլի» հրատարակվել հատոր-հատոր, գինն էլ փոքր ինչ էթան, այն ժամանակ ժողովուրդն էլ կարող էր գնել այդ գրքը: Չունենող չէ կարող միանգամից որ ընթերցանութիւնը մեր մէջ չէ տարածված, բայց 40—50 կօպէկ կարող է տալ: Թէ և ուս ժողովրդի մէջ ընթերցանութիւնը անհամեմատ աւելի է տարածված, քան թէ մեր մէջ, մինչև անգամ պահանջ է դարձել, այնու ամենայնիւ նշանաւոր գործիքի գրուածքները և ուրիշ գրքեր առհասարակ հրատարակվում են շատ էթան գինով: Եւ այդ է միակ պատճառը, որ այդպիսի հրատարակութիւններ տանեալ հաղորդելով են ծախվում:

Մենք չենք ուզում ասել թէ Բաֆֆիի գրուածքները հրատարակվին այնքան էթան գինով, որ քան ուսաց նշանաւոր գործիքի գրուածքները, ոչ, որովհետեւ մեր մէջ, որքան էլ էթան լինեն հրատարակութիւնները, այնքան չեն տարածվի, ի հարկէ, որքան ուսնեղի մէջ, քանի որ մեր մէջ դեռ ևս ընթերցանութիւնը պահանջ չէ դարձել: Ժողովրդի բոլոր խաւերի մէջ տարածելու համար, Բաֆֆիի գրուածքները անհրաժեշտ է հրատարակել առանձին-առանձին, իսկ մեծ գրուածքները (ինչպէս «Կայծերը», «Գաւիթ-բէլի») հատոր-հատոր, որ գինը շատ չը լինի: Նոյն իսկ փղբրիկ վէպիկներն էլ պէտք է առանձին-առանձին հրատարակել և գինը մի քանի կօպէկ նշանակել: որքան մի գրքը էթան լինի, այնքան շատ կը տարածվի, սա մի ալիօսի օժիւ է: Թող գրքի թուղթը վատ լինի, սպագրութիւնը այնքան էլ մաքուր չը լինի, միայն թէ գինը էթան լինի: Ժողովրդի գրքի ոչ լաւ թուղթն է հարկաւոր, ոչ էլ գեղեցիկ տպագրութիւնը, նրան հարկաւոր է միայն գրուածքը: Հաւատարմանը ենք Բաֆֆիի որդեղ խնամակալներին, որոնք միայն իրաւունք ունեն հրատարակել Բաֆֆիի գրուածքները, որ մեր առաջարկութիւնը կատարած ժամանակ հանդուցեալի օրդըք աւելի կօղովն, քան թէ այժմ, որովհետեւ այդ դէպքում տաղանդաւոր հեղինակի գրուածքները հաղորդելով կը տարածվին ժողովրդի մէջ, իսկ այժմ, որքան մեղ յայտնի է, շատ քիչ են տարածվում ժողովրդի մէջ:

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՆԱՆԻՅ

Հոկտեմբերի 27-ին

Հին-Նախիջևանի և Շարուրի գաւառները հրաւային և արեւմտեան կողմից սահմանակից լինելով Պարսկաստանին հետ, տահմանակից են և Մաքուրի խանութեան, որի բնակիչներն մեծ մասը քրիստոնէս են: Արաբսի փոխութեամբ այդ թափառական ցեղերի աւազակային արշաւանքներից ուսաց սահմանները պահպանելու համար առաջ կային կողակներ, իսկ այժմ փոխարինած են սահմանապահ զինուորներով: Աւազակութեամբ պարագլուղ քրիստոնէս, յարմար ժամանակ գտնելով, միշտ անցնում են Նախիջևանի և Շարուրի գաւառները և յարձակվում գիւղերի վրա, քչելով ձիեր, կովեր, ոչխարներ և այլն: Նրանց անցնելու գլխաւոր տեղը լինում է «Թաթառաբորլի» կոչված տեղը, որը կէս կիւրտ հեռու է գտնվում Արաբսից: Այս օրերս այդ քրիստոնէս աւազակները մի խումբ անցնելով յիշեալ տեղից, հասաւ մինչև Շըլի-Մանուղի հատարակութեան պատկանալ հողերը: հեռաւորութեամբ 50 վերստից աւելի Արաբսից: Գիշերը դրանք մօտենալով Շխանաւոյ հայաբնակ գիւղը, պատահում են գիւղից դուրս խաչաքարանքներ, որոնց ստիպում են յայտնել գիւղի հարուստներին, որ նրանցից ամեն մէկը հարկեալանք բուրդի պատրաստէ, իսկ իրանք մի քանի օրից յետոյ պիտի գան և առնեն: Գիւղը մեծ սարսափի մէջ է այժմ, և մարդիկ գիշերները իրանց աներում երկիւղից քնել չեն կարողանում: Անցեալները ևս տեղիցս երկու պարոններ պօստային կառքով գնալիս դէպի Երևան, դեռ Սահարակ պօստի կայարանը չը հասած, գիշերակայ

ժամի 10-ին մի խումբ քուրդեր յարձակվելով դէրանց վրա «Գեաղուկուր» մօտ, կողպաւում են նրանց իրանց ունեցածից և ձանապարհողներին մինիս վիրաւորում հրացանի գնդակով ու իսկոյն անցնում Արաբսի միւս ափը:

Ա. Տ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հնորակալութեամբ ստացանք Բաֆֆիի ալիօս նրա հանդուցեալ ամուսնու հետեւալ գրուածքը: 1) «Խեթի» և «Ջալալեդդին» (փառակալային երկայ 1890 թ.ին Մոսկվայում, Մ. Բարկուրի բնակի տպարանում տպագրված, 2) «Կայծեր» վերջը, Թիֆլիսում «Արօր» տպարանում ներկայ 1890 թ. տպված, և 3) «Գաւիթ-բէլի», Թիֆլիսում, նոյնպէս Նաղարեանցի «Արօր» տպարանում, ներկայ 1890 թ.ին տպագրված:

Յօդուտ չքաւոր Լիդա Սմիտանի ստացանք Ն. Մատինեանցի և Ս. Յարութիւնեանցի ձեռք հետեւալ անձինքներից 24 ռ. 50 կ. է: Աւազակեանց 3 ռ., Յ. Թումաշեանց 3 ռ., Գ. Բեղլեանց 3 ռ., Ա. Յովսէփեանց 2 ռ., ապա Ս. Թ. Թումաշեանց, Ի. Ամիրադեանց, Մ. Երամեան, Բ. Չալիկեանց, Գ. Կաճկաճեանց, Գ. Չալիկեանց, Ս. Սառաջ-Գուրգենեանց, Գ. Սարգսեանց, Խ. Ամիրադեանց, Ա. Գօզալեան, Խոջափարութեան, Ա. Խոջափարութեան մի ռուբլի, վերջապէս Ս. Գալարաճէ 50 կօպէկ: Դամենը 24 ռ. 50 կ. է: Նախկին 56 ռ. հետ կուր 80 ռ. 50 կօպէկ:

«Մշակի» խմբագրի գրական 25-ամեայ դործն: Նեոլեան առիթով ստացանք Կարսից, պ. Սեյի կեանքից, մի գեղեցիկ արժանեալ բաժակակալ մէջը գրված ապակեայ նորը բաժակով:

ՄԵՐ-ՂԱՐԱՔԻՍԱՅԻՅ մեղ գրում են հետեւեալը. «Վերին աստիճանի գեղեցիկ օրեր է նախում այստեղ: Երբեք այդ տեսակ հրաշալի եղանակ այնանը եղած չէ. ցերեկները տաք է լինում ոչ մի ամպ չէ երեւում երկնակամարի վրա, ոչ մի օր դեռ ևս անձրեւ կամ ձիւն չէ եկել, իսկ գիշերները՝ երկինքը միշտ աստղազարդ է լինում: Լուսինը իր ժամանակին դուրս է լողում... Այն մի ամիս է, որ աստղադէմները կարող կը լինէին ստանց ընդհանուր, աշողութեամբ դիտել և նային աշխարհի բոլոր երեւոյթները»:

«Մշակի» անցեալ, 125-որդ համարի մէջ աւած, Հայոց Բարեգործական ընկերութեանը Գրիէլ Սուրբուկեանցի կողմից առած յայտարարութեան մէջ մի սխալ է մտել. ներքեից երբ տողում տպված է. «համաձայն կանոնադրութեան 2-որդ կէտի», այն ինչ պէտք է լինէր. «համաձայն կանոնադրութեան 2-որդ յօդուածի և կէտի»:

Ներքին-Ախտայից մեղ գրում են. «Զինուորային գրական առեւտր, նոյնիմբերի 1-ին բանալու իր նիստերը և հրաւերելու է Գաւառիչապի բաւնի նորակոչ զինուորացուներին դէպի վիճակ հանութեան, որին ենթարկվելու են մի քանի հրաւեր հոյի թէ հայ և թէ մալական երիտասարդները: Վիճակահանութիւնը կատարվելու է Ներքին-Ախտայում»:

ՎԱՂԱՐՇԱՊԱՅԻՅ մեղ գրում են, որ հոկտեմբերի 21-ին, եպիսկոպոսական ձեռնադրութեան պատճառով թէ Երևանից և թէ Վաղարշապատի չրջակայ գիւղերից մեծ բազմութիւն էր հաւաքվել Էջմիածնում: Եպիսկոպոս ձեռնադրութեան Գրիգոր Վարդապետ Գառնակերեանց և յայտնի առաջինը նշանակվելու է Երևանի թեմի առաջնորդ, իսկ երկրորդը՝ Հնդկաստանի առաջնորդ: Պատարագիչը ինքն Վահագն Կաթողիկոսն էր:

Մեղրից մեղ գրում են. «Այստեղի բնակիկները այս տարին շատ սակաւ է և էթան էլ է ծախվում. պատճառն այն է, որ մեր բնակիկները անմաքուր են, իսկ ուրիշ տեղերի բնակիկները աւելի թանկ է ծախվում, մերից աւելի մաքուր լինելով»:

Մեղ գրում են Մեղրից, որ Արաբսի ալիօսը դանդաղ ձանապարհը շատ վատ է և երկիւղալի ամեն տարի բազմութիւն մարդիկ դժբաղդ դէպքերին են ենթարկվում այդ վատ ձանապարհներին:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Питательный напиток

Чистый Какао Блокеръ

Всякая пища, съеденная в 4 часа, должна быть усвоена организмом. Чистый Какао Блокеръ — это напиток, который легко усваивается и не вызывает никаких побочных действий. Он содержит все необходимые для организма вещества и является идеальным напитком для всех, кто хочет сохранить свое здоровье.

Всякая пища, съеденная в 4 часа, должна быть усвоена организмом. Чистый Какао Блокеръ — это напиток, который легко усваивается и не вызывает никаких побочных действий. Он содержит все необходимые для организма вещества и является идеальным напитком для всех, кто хочет сохранить свое здоровье.

Легко усваивается.
Всякая пища, съеденная в 4 часа, должна быть усвоена организмом. Чистый Какао Блокеръ — это напиток, который легко усваивается и не вызывает никаких побочных действий. Он содержит все необходимые для организма вещества и является идеальным напитком для всех, кто хочет сохранить свое здоровье.

Легко усваивается.
Всякая пища, съеденная в 4 часа, должна быть усвоена организмом. Чистый Какао Блокеръ — это напиток, который легко усваивается и не вызывает никаких побочных действий. Он содержит все необходимые для организма вещества и является идеальным напитком для всех, кто хочет сохранить свое здоровье.

Легко усваивается.
Всякая пища, съеденная в 4 часа, должна быть усвоена организмом. Чистый Какао Блокеръ — это напиток, который легко усваивается и не вызывает никаких побочных действий. Он содержит все необходимые для организма вещества и является идеальным напитком для всех, кто хочет сохранить свое здоровье.

Легко усваивается.
Всякая пища, съеденная в 4 часа, должна быть усвоена организмом. Чистый Какао Блокеръ — это напиток, который легко усваивается и не вызывает никаких побочных действий. Он содержит все необходимые для организма вещества и является идеальным напитком для всех, кто хочет сохранить свое здоровье.

Легко усваивается.
Всякая пища, съеденная в 4 часа, должна быть усвоена организмом. Чистый Какао Блокеръ — это напиток, который легко усваивается и не вызывает никаких побочных действий. Он содержит все необходимые для организма вещества и является идеальным напитком для всех, кто хочет сохранить свое здоровье.

ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

(Միջազգային կամուրջ, № 52)
ՏՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԵՐԵՆ ԳՐԻՔԵՐ: Ամսվան վճարը 20 և 10 կոպեկ: Բաց է առաջարկվում 9 1/2—2 ժամը, և երեկոյան 4—7 ժամը: Իսկ կիրակի օրերը 9 1/2—12 ժամը 8—10



ՄԻՋՈՑ ԽՆԴՐՈՒՄԻ ԴԷՄ

Բժշկական գեղարտամանից թղթա-տրված

ՕԼԶԱԿՏՐՈՒՄ ՆՈՒԴԻՆ

Մ. Ա. ԺԻՐՄՈՒՆՍԿԱՅԻ

Ճախվում է 40 կոպեկով

Գեղարտամանից թղթա-տրված և 40 կոպեկով

31—52 (Ե.)

Գլխավոր պա-

Հետք դարձ-

վում է Թիֆլի-

սում և Բաղ-

ում Բարձրա-

դոյն Հաստա-



ված դեղատո-

աղանդների

վաճառման կ-

կատան ընդ-

րված մաս-

12—50 (Ե.)

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԱՄԱՐ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ՀԵՏԵՆԵՍԻ ԴԱՍԱՐԻՔԵՐԸ

„Начальная книжка для обучения русскому языку, годъ 1, 2, 3-е издание 2-е, сост. Н. Я. Теръ-Акоповъ, 4-й 45 коп.“

Այս երկրորդ տպագրությունը Սուրբ Էջմիածնի մանսափողովը ընկնց և առաջարկեց ընդունել հայոց ծխական ուսումնարաններում որպես յարմարագույն դասագիրք ուսուցիչի I, II և III տարից համար:

„Учебникъ русскаго языка для армянскихъ училищъ, годъ 4 и 5-е издание 8-е, сост. Н. Я. Теръ-Акоповъ, 4-й 60 коп.“

„Русское Слово, руководство для армянскихъ училищъ, годъ 1 и 2-е издание 9-е, сост. К. Теръ-Давтянцъ, 4-й 50 коп.“

Վերջինից գրքերը հաճանած և առաջարկված են լուսաբերված են նախարարությանը և Սուրբ Էջմիածնի մանսափողովը որպես դասագիրք հայոց ծխական ուսումնարաններին համար:

Նոյն գրավաճառանցի հրատարակված են լուսաբերված են և հետևելով դասագրքերը:

„Русскій Писатели въ выборѣ и обработкѣ для школы“ т. II сост. В. Мартиновскій, издание 2-е. цѣна 1 руб. 25 коп.

„Собрание примѣровъ для письменнаго исчисления вып. I вычисления на числами отъ 1 до 100“ сост. С. Н. Захаровъ, издание 9-е цѣна 20 к.

(Ե.) 2—3

„ՎԻԵՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“

(ՎԵՆՏՈՒՄ ԿԱՄԱՐԱՆԻ)

ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ

ԳՕԼՈՎԻՍԿԻ ՊՐՈՍԿԵՍԻ ՎՐԱ, ՄԻԿԱՆԻՆԻ ՏԱՆԸ

Ստացանք այս օրերս մեծ քանակությամբ, ամենավերջին տարագով կարած մարդկանց և երեխայոց ձեռագիր և աշխատանքի հաղորդումներ: Կը տարները ուղղակի և անձամբ գործարաններից ընկնով պատրաստել ենք տուել մեր հը կողմից տակ, առկա անտեսարար, Վոսկրեսի մեր սեփական արհեստանոցում մեծ ռուսական, այլ հաղորդումներ, որպես առաջին ձեռքի արտադրություն, այսուհետև ձեռնարկ ենք գործարանների ընկնով առկա զինվորական և քաղաքական գրքերի և թղթերի ընկնով կողմից:

Խուզավորվանց 8—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՄԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԻՍԱՍԱՐԻՆԻ

(Կուրիա, Վոսկրեսի արձանի հանդիպ.)

Հիմնականին ընդունում են ամեն օր

ԱՌԱՋՈՏՆԵՐԸ

ՆԱԽԱՍԱՐԻՆԻ—9—11 ժ. վերաբերված (և առանցիկ) սիֆիլիսի և աչքացույցի ԲՈՒԿՈՎՈՎԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.

ԿԻՆԻՔԻՆԻ ԻՍԱՀԱԿԵԱՆՆ—11 1/2—12 ժ. կանանց և երեխայոց ց.

ԿԻՆԻՔԻՆԻ ՍՈՒԴԱՐԻՆԻՍԿԱՅԱ—12—12 1/2 ժ. կանանց և ներքին ց.

ՊՐՈՏԱՍԵՎԻԶ—12—1 ժ. ախտի, կոկորդի և ընթից ց.

ԿԱՐԱՊԵՏԵԱՆՆ—12 1/2—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳԱԿՈՍՏԱԿԻ—5—6 1/2 ժ. կաշուի ցուցերի, սիֆիլիսի և վերաբերված.

ՓՈՒԴԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին, երեխայոց և զգային ց. (էլեկտրոտերապիա):

ՆԱԽԱՍԱՐԻՆԻ—6—7 ժ.

Վճար—50 Կ. Համախոսողի (կոնսիլիումի) համար առանձին:

Հերթակալ բժիշկ—Երեկ. ժ. 9-ից մինչև առ. ժ. 7-ը:

Հիմնականին վերաբերված բժշկական ՆԱԽԱՍԱՐԻՆԻ

ВЫСОЧАЙШЕ

ТОВАРИ-

МЕХАНИЧЕСКАГО И ЧУ-



УТВЕРЖДЕННОЕ

ЩЕСТВО

ГУННО-ЛИТЕЙНОГО ЗАВОДА

БЕЛЛИНО-ФЕНДЕРИХЪ

ВЪ ОДЕССѢ.

Складъ и производство сельско-хозяйственныхъ и заводскихъ машинъ и орудій, какъ-то:

Постоянныхъ паровыхъ машинъ и котловъ разныхъ системъ и силъ, Мукомольныхъ мельницъ и всякаго рода принадлежностей къ нимъ. Щеретовыхъ, вальцовыхъ поставовъ крупосѣкъ, буратовъ и всякихъ другихъ мельничныхъ машинъ системы Г. Даверио. Лѣсопильныхъ станковъ съ пилами. Конныхъ молотилокъ, и приводовъ, вѣялокъ, соломорѣзокъ, кукурузныхъ молотилокъ—ручныхъ, конныхъ и паровыхъ Прессовъ для винограда и сѣна. Маслобоекъ, брандспойтовъ и пасовъ. Конныхъ граблей «Голдсвортъ».

Производство котельныхъ работъ и отливка изъ чугуна и мѣди.

Выполненіе всякаго рода заказовъ для паровыхъ вальцовыхъ мельницъ, винокуренныхъ, пивоваренныхъ, сахарныхъ и другихъ заводовъ, вагоны для конножелезныхъ дорогъ.

Складъ локобилей, паровыхъ молотилокъ, конныхъ молотилокъ со штифтовыми ба-рабанами и конныхъ приводовъ известной фирмы Клейтонъ и Шулдортъ въ Линкольнѣ, и Вѣнѣ.

Главный складъ жатвенныхъ машинъ и косилокъ «Желѣзная рама» и «Континенталь» Джонстона.

Единственный складъ вальцовыхъ станковъ

Г. ДАВЕРИО въ Цюрихѣ.

Заводъ имѣетъ свой собственный эллингъ для постройки пассажирскихъ и буксирныхъ паровозовъ, паровыхъ катеровъ, баржъ и проч. и принимаетъ заказы на поднятіе на эллингъ судовъ для исправленія или окраски подводныхъ частей и ихъ корпусовъ.

Агентъ въ Ростовѣ н/Д. Г. Я. Золотухинъ, Николаевскій пер. д. Арт. Яблокова, противъ Реальнаго училища кв. № 8.

37—100 (Ե. չ.)

ԿԻՆԻՔԻՆԻ ԻՍԱՀԱԿԵԱՆՆ

Վանքի Մեծ փողոցի և Մուխրանսկի փողոցի անկիւն, տուն Ջանշիկովի: 4—5

Լոյս տեսաւ.

Շիրվանշահի

ԶՈՒՐ ՅՈՅՍԵՐ

Վէպը:

Գինն է Թիֆլիսում 1 ռուբլի: Օտարաբաղադրյալներին ճանապարհածախսով 1 ռ. 25 Կ վաճառվում է Կնարանական գրավաճառանոցում և հեղինակի մոտ՝ Թիֆլիս Վիրանզադե 5—5